Նորություններ «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրից

Մեր կողմից իրականացվող «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի շրջանակներում այս ամիս կնքվել են երկու հուշագիր:

Հուշագրերից մեկը կնքվեց «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության հետ, որի համաձայն կողմերը միմյանց աջակցելու են Սպիտակ քաղաքի երկու դպրոցներում իրականացվող ծրագրային գործողությունների ընթացքում:

Հուշագիր կնքվեց նաև ՀՀ Շիրակի մարզպետարանի հետ, ըստ որի կողմերը միմյանց աջակցելու են Գյումրի համայնքում գործող հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող 12-18 տարեկան դեռահասների և երիտասարդների շրջանում նորարարության, նախաձեռնողականության, քաղաքացիական ակտիվության խթանման, ինչպես նաև վերջիներիս կրթման և անհատական զարգացման հարցում

«UPSHIFT Հայաստան» ծրագրի շրջանակներում փետրվարի 22-ից 23-ը տեղի ունեցավ ծրագրի մենթորների վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում 5 մենթոր հնարավորություն ունեցան ծանոթանալու մենթորության ոճերին, սկզբունքներին, դեռահասների հետ աշխատանքի առանձնահատկություններին, երիտասարդական նախաձեռնությունների մշակման քայլերին, ինչպես նաև բացահայտեցին դեռահասներին աջակցելու և ուղղորդելու համար անհրաժեշտ կարևոր մեթոդներ, որոնք կօգնեն վերջիններիս կայանալ՝ որպես հմուտ մենթորներ:

Իսկ ահա փետրվարի 26-ին Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում տեղի ունեցավ «UPSHIFT Հայաստան» ծրագրի տեղեկատվական առաջին հանդիպումը, որի ընթացքում ծրագրի ղեկավար Արթուր Նաջարյանը ներկայացրեց ծրագրի նպատակը, իրականացման փուլերը, պատանիների կողմից ծրագրային գաղափարների ներկայացման կարգն ու ձևաչափը: Ուսանողները հնարավորություն ունեցան նաև մասնակցելու «Նախաձեռնողականություն, ակտիվ քաղաքացիություն» թեմայով դասընթացին, որը վարեց Նարեկ Թութխալյանը:

Կնքվեցին հուշագրեր ուսումնական հաստատությունների հետ

Փետրվարի 25-ին և 26-ին ԵՆԿ-ն կնքեց փոխըմբռման հուշագրեր Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի և Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի հետ՝ երիտասարդական ոլորտում համագործակցության վերաբերյալ, որի նպատակն է օժանդակել կողմերի միջև համագործակցության ամրապնդմանը՝ տրամադրելով ուսումնական հաստատության ուսանողներին և դասախոսական կազմին հնարավորություն՝ մասնակցելու ԵՆԿ ՀԿ-ի կողմից իրականացվող միջազգային ծրագրերին:

ԵՄ դեսպանի այցելությունը ԵՆԿ և Երիտասարդների տուն

Փետրվարի 23-ին ԵՆԿ-ն հյուրընկալեց Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկիին, ով հանդիպեց ԵՆԿ աշխատակազմի անդամներին, ավելի մանրամասն ծանոթացավ կազմակերպության գործունեության ուղղություններին, ինչպես նաև իրականացված և ընթացիկ ծրագրերին: Հաջորդիվ դեսպանն այցելեց ԵՆԿ ՀԿ-ի կողմից հիմնադրված «Երիտասարդների տուն», որի ընթացքում ծանոթացավ կենտրոնի գործունեությանը, իրականացվող ծրագրերին, երեխաների հետ տարվող առօրյա աշխատանքներին, ինչպես նաև շփվեց կենտրոնի սաների հետ, ովքեր հնարավորություն ունեցան իրենց հարցերն ուղղել դեսպանին: Հանդիպումների ընթացքում դեսպանը կարևորեց ԵՆԿ ՀԿ-ի դերը երիտասարդների կրթման և համընդհանուր զարգացման գործում:

Շվեդիայից ժամանած երիտասարդական ոլորտի ներկայացուցիչների ճանաչողական այցը ԵՆԿ և Երիտասարդների տուն

Փետրվարի 28-ին ԵՆԿ ՀԿ-ն և Երիտասարդների տունը հյուրընկալեցին Շվեդիայից ժամանած երիտասարդական ոլորտի ներկայացուցիչների, ովքեր ուսումնական այցով Հայաստանում էին: «FRYSHUSET» ՀԿ ներկայացուցիչ Մարտին Դորյենը և «Framtidståget» ՀԿ ներկայացուցիչ Մեգան Մյուլերը հնարավորություն ունեցան ծանոթանալու ԵՆԿ գործունեության ուղղություններին, ինչպես նաև իրականացված և ընթացիկ ծրագրերին: Երիտասարդների տուն այցելության ընթացքում նրանք ծանոթացան կենտրոնի գործունեությանը, իրականացվող ծրագրերին, երեխաների հետ տարվող առօրյա աշխատանքներին, ինչպես նաև շփվեցին կենտրոնի սաների հետ:

Հանդիպում Ազգային ժողովում

Հաշվի առնելով ՀՀ կառավարության նոր ծրագիրն ու սպասվելիք կառուցվածքային փոփոխությունները, կարևորելով քաղաքականությունների մշակման և իրականացման համար պատասխանատուների հետ երկխոսությունը, փետրվարի 11-ին ԵՆԿ ՀԿ-ի կողմից աշխատանքային հանդիպում էր նախաձեռնվել ՀՀ ԱԺ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Մխիթար Հայրապետյանի և ոլորտի շահագրգիռ փորձագետների հետ: ԵՆԿ-ից հանդիպմանը մասնակցել է Ծրագրի պատասխանատու Կարեն Տերտերյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել է պետական երիտասարդական քաղաքականության առկա վիճակին և ակնկալիքներին, երիտասարդությանը վերաբերող օրենքի բացակայությանը, միջգերատեսչական փոխգործակցությանը, պետություն-մասնավոր հատվածի համագործակցության արդյունավետության բարձրացմանը առնչվող հարցեր:

Ուրբաթօրյա Սրճարան

Այս ամիս տեղի ունեցավ հերթական «Ուրբաթօրյա սրճարանը », որին հատուկ ջերմ մթնոլորտում հյուրերը բացահայտեցին Էստոնիայի, Սլովակիայի, Չեխիայի և Հայաստանի սիրո տոներին նվիրված ավանդույթները և սովորույթները, ինչպես նաև մասնակցեցին սիրուն նվիրված երգերի քուիզին և համտեսեցին ԵԿԾ կամավորների կողմից պատրաստած ավանդական ուտեստները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հանդիպումները դարձնել պարբերական և ընդգրկել այլ շահագրգիռ անձանց ու կազմակերպությունների:

Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոն

Փետրվարի 27-ին Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում տեղի ունեցավ «Erasmus+ Youth. Տեղեկատավական կենտրոն» ցանցի տարեկան հանդիպումը, որի շրջանակներում տեղեկատվական կենտրոնների ներկայացուցիչները ներկայացրել են 2018 թվականին իրենց ծավալած գործունեության արդյունքները, ձեռքբերումները և առկա մարտահրավերները:

Եվրոպական կամավորական աշխատանք

Այս ամիս տեղի ունեցավ ԵԿԾ կամավոր Բերթ Ցապովի հրաժեշտի ոչ-ֆորմալ հավաքույթը, ով Գյումրի էր ժամանել Էստոնիայից և ինն ամիս շարունակ ԵՆԿում զբաղվել է «Ուրբաթօրյա սրճարանի», Երիտասարդների միջազգային օրվա կազմակերպչական աշխատանքներով, Երիտասարդների տանը վարել է «Իմպրովիզացիայի ակումբ», պատրաստել է «Through the eyes of EVS» ամսական տեսանյութը և այլն:

Գոռ Խաչատրյանը և Սյուզաննա Մարգարյանը «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագրի շրջանակներում 2019թ. փետրվարի մեկից սկսել են իրենց կամավորական աշխատանքը Ռումինիայի Կրայովա քաղաքում գործող «Asociatia Nationala de Dezvoltare Continua a Tineretului din Romania “ANDCTR”» հասարակական կազմակերպությունում:

Գոռը և Սյուզաննան տեղի համայնքում կազմակերպելու են վարվեցողության կանոնների վերաբարյալ ինտերակտիվ աշխատարաններ, Դոլժի երիտասարդների շրջանում տարածելու են տեղեկատվություն տեղական և միջազգային կամավորական հնարավորությունների մասին, կազմակերպելու են տարբեր միջոցառումներ, պատրաստելու են հոդվածներ և տեսահոլովակներ իրենց կամավորական գործունեության վերաբերյալ:

Շարժունակությունը ԵՆԿ-ի հետ

Այս ամիս Վրաստանում տեղի ունեցավ «Erasmus+ Mastery» խորագիրը կրող միջազգային դասընթացը՝ ծրագրի նախագծում և կառավարում թեմայով: Հայաստանից ծրագրին մասնակցում էին Հայկական Կարիտասում ծրագրի համակարգող Գոհար Երանյանը, «Երիտասարդները հանուն փոփոխության» ՔՀԿ-ի նախագահ Գրիգոր Ջանիկյանը և «Համախմբված երիտասարդական միություն» ՀԿ-ի անդամ Ազգանուշ Մնացականյանը:

Եվս մեկ միջազգային Էրազմուս+ դասընթաց անցկացվեց Վրաստանի Քոբուլեթի քաղաքում, որը կրում էր "What comes next?" խորագիրը, այն իմպրովիզացիայի և ձեռնարկատիրական մտածողության վերաբերյալ էր: Հայաստանից ծրագրին մասնակցում էին AEGEE-Երևանից Իզաբելլա Խանզրատյանը և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ուսանող Վահրամ Շաբոյանը:

Իսկ Թունիսի Նեֆթա քաղաքում տեղի ունեցավ «Live and let live: desertification and its effects» խորագիրը կրող միջազգային Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագիրը անապատացման և դրա ազդեցությունների վերաբերյալ: Հայաստանից ծրագրին մասնակցում էին «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաներ Գևորգ Առաքելյանը, Տաթևիկ Նաջարյանը, Նադեժդա Ավետիսյանը ու Ժիրայր Կուզիկյանը:

Հայկական պատվիրակությունը ղեկավարում է ԵՆԿ ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանը:

Երիտասարդների ձեռնարկատիրական կրթությունը հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտում

Մեկնարկել է երկամյա համագործակցային ծրագիր Հայաստանի, Վրաստանի, Լատվիայի, Իտալիայի, Իսպանիայի և Ուկրաինայի միջև՝ Էրազմուս+ ծրագրի աջակցությամբ, որի թեման է երիտասարդների ձեռնարկատիրական կրթությունը հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտում: Ծրագիրը Հայաստանում կիրականացնի Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն:

Գործընկերների մեկնարկային հանդիպումը տեղի ունեցավ Վիննիցայում (Ուկրաինա) ս.թ. փետրվարի 7-12-ը, որին մասնակցեցին կազմակերպության ներկայացուցիչներ Աննա Եղոյանը և Լիանա Հակոբյանը:

Փետրվարը Երիտասարդների տանը

Երիտասարդների տունը շարունակում է իր աշխատանքային գործունեությունը՝ կազմակերպելով կրթական և թեմատիկ շաբաթներ, որոնք ուղեկցվում են հետաքրքիր աշխատարաններով, ուսուցողական խաղերով և վիկտորինաներով:

«Կտոր մը սեր» թեմատիկ շաբաթվա ընթացքում կենտրոնի պատանիներն անդրադարձան սիրո տոնին՝ պատրաստելով գեղեցիկ բացիկներ և աղի բլիթներ: Իսկ ուրախ ժամանցն ապահովվեց ամփոփիչ միջոցառմամբ:

Ընթերցանության շաբաթվա շրջանակներում պատանիները կենտրոնում նշեցին գրքի տոնն ու հայ մեծ բանաստեղծ Հ.Թումանյանի 150 ամյակը: Միջոցառման ժամանակ մասնակիցները հնարավորություն ունեցան ընթերցել սիրված բանաստեղծությունները և քննարկել գրքի դերը մարդու կյանքում:

Խթանելով առողջ ապրելակերպն և առաջնորդության գաղափարը երիտասարդների շրջանում՝ «Երիտասարդների տան» սաները GOALS Armenia-ի հետ կազմակերպեցին ֆուտբոլային մարզումներ:

Կենտրոնում հաջողությամբ ընթանում են անգլերենի և համակարգչային ակումբները, այս ամիս մեկնարկեցին յոգայի և քննարկումների ակումբները, իսկ անձի ինքնաճանաչման ակումբը մոտեցավ իր ավարտին:

Երիտասարդների տունը շարունակում է իր աշխատանքային գործունեությունը՝ կազմակերպելով կրթական և թեմատիկ շաբաթներ, որոնք ուղեկցվում են հետաքրքիր աշխատարաններով, ուսուցողական խաղերով և վիկտորինաներով:

«Կտոր մը սեր» թեմատիկ շաբաթվա ընթացքում կենտրոնի պատանիներն անդրադարձան սիրո տոնին՝ պատրաստելով գեղեցիկ բացիկներ և աղի բլիթներ: Իսկ ուրախ ժամանցն ապահովվեց ամփոփիչ միջոցառմամբ:

Ընթերցանության շաբաթվա շրջանակներում պատանիները կենտրոնում նշեցին գրքի տոնն ու հայ մեծ բանաստեղծ Հ.Թումանյանի 150 ամյակը: Միջոցառման ժամանակ մասնակիցները հնարավորություն ունեցան ընթերցել սիրված բանաստեղծությունները և քննարկել գրքի դերը մարդու կյանքում:

Խթանելով առողջ ապրելակերպն և առաջնորդության գաղափարը երիտասարդների շրջանում՝ «Երիտասարդների տան» սաները GOALS Armenia-ի հետ կազմակերպեցին ֆուտբոլային մարզումներ:

Կենտրոնում հաջողությամբ ընթանում են անգլերենի և համակարգչային ակումբները, այս ամիս մեկնարկեցին յոգայի և քննարկումների ակումբները, իսկ անձի ինքնաճանաչման ակումբը մոտեցավ իր ավարտին: